



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Մամլո հաղորդագրություն

Դեկտեմբերի 15-ից ուժի մեջ է մտել «**Դեղերի մասին**» ՀՀ նոր օրենքը: Բոլոր այն նորմերը, որոնց կիրարկման համար օրենքով նախատեսված են ենթաօրենսդրական ակտերի (կառավարության որոշումներ, առողջապահության նախարարի հրամաններ) ընդունում, կգործեն դրանց ընդունումից և ուժի մեջ մտնելու պահից:

Կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի ընդհանուր ցանկի կեսից ավելին ձեռք է բերվում անմիջապես դեղարտադրող միջազգային դեղագործական կազմակերպություններից, իսկ մոտ 5 տոկոսը տեղական դեղարտադրողներից:

Ընթացիկ տարում դեղերով 100 տոկոս ապահովվել են հոգեկան հիվանդություններ (հոգեմետ դեղեր), շաքարային և ոչ շաքարային դիաբետ (հակադիաբետիկ դեղեր), պարբերական հիվանդություն (կոլիխիցին և/կամ համարժեք այլ դեղեր), քրոնիկ երիկամային անբավարարություն (երիկամային փոխպատվաստման և/կամ ծրագրային հեմոդիալիզի դեպքերում (էրիթրոպոետին), տուբերկուլոզ հակատուբերկուլոզային և հակավիրուսային դեղեր), անհաս նորածինների շնչառական խանգարման համախտանիշ (բերակտանտ ակտիվ նյութ պարունակող դեղեր), 70 տոկոսով՝ չարորակ նորագոյացություններ (ցավազրկող դեղեր, թմրադեղեր, ցիկլոսպորին և արյունաբանական դեղեր), 80 տոկոսով՝ էպիլեպսիա (հակացնցումային դեղեր) ունեցող քաղաքացիները:

«Հայաստան-Արցախ» հիմնադրամի աջակցությամբ մասնագիտական բժշկական հաստատություններին հատկացվել են երկրում մեծ պահանջարկ ունեցող թանկարժեք դեղեր և բժշկական նշանակության ապրանքեր:

**Մոր և մանկան առողջության պահպանումը** առողջապահության ոլորտի կարևոր առաջնահերթություններից է: Հաստատվել է «Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» որոշումը:

Հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների, ձեռնարկված միջոցառումների և լայն քարոզչության արդյունքում արդեն իսկ արձանագրվել է նորածինների սեռերի անհամամասնության նվազեցում: Այժմ այն կազմում է 108 տղա 100 աղջկա դիմաց՝ 2014թ.-ի 115-100 և 2015թ. 113-100-ի դիմաց:

Դրական ցուցանիշներ են արձանագրվել նաև անպտղության նվազեցման ուղղությամբ:

2016թ. 11 ամսում արձանագրվել է **37.462** ծննդաբերություն: Արագ արձագանքման արտագնա անհետաձգելի մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության ծրագրով սպասարկվել է մարզային 72 կանչ, որոնք նպաստել են մայրական ու նորածնային մահերի կանխարգելմանն ու նվազեցմանը:

Եթե մայրական մահացության ցուցանիշը 1999-2001թթ. եռամյա կտրվածքով եղել է 40.3/100.000 կենդանաճնության հաշվով, ապա 2014-2016-ին՝ 18/100.000:

2016թ. արձանագրված մայրական մահացության **10** դեպքից **7** –ի պատճառը եղել են հղիության հետ չկապված ախտաբանություններ (յարդի սուր անբավարարություն և յարդային կոմա, գեներալիզացված տուբերկուլոզային ինտոքսիկացիա, գլխուղեղի անոթների ինքնաբուխ պատռվածք տանը): Մյուս 3 դեպքերում մահվան պատճառը հետծննդյան արյունահոսությունն է և հեմոռագիկ շոկը:

Ընթացիկ տարում շարունակվել են նորածնային սկրինինգ ծրագրերը, որոնց շնորհիվ՝ հայտնաբերվել է բնածին հիպոթիրեոզով 17 երեխա, 4-րդ աստիճանի ծանրալսությամբ 41 երեխա և ֆենիլկետոնուրիայով 7 երեխա վերցվել են հսկողության և ստացել անվճար բուժօգնություն կամ հատուկ սնունդ: Նույն ժամանակահատվածում հայտնաբերված անհասության ռետինոպատիա ունեցող նորածինների շրջանում կուրության կանխարգելման նպատակով իրականացվել է 21 լազերային միջամտություն, անցկացվել 16 հակաանգիոգեն ներարկում:

Արձանագրվել է 0-1 տարեկան երեխաների մահվան դեպքերի նվազում: Ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների համաձայն՝ 2016թ. 11 ամսվա ընթացքում 0-1 տարեկան երեխաների մահերի բացարձակ թիվը կազմել է 325՝ 2015թ. նույն ժամանակահատվածի 336 դեպքի համեմատությամբ:

0-5 տարեկան երեխաների մահացությունը նույնպես կրճատվել է: Ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների համաձայն, 2016թ. 11 ամսվա ընթացքում 0-5 տարեկան երեխաների մահերի բացարձակ թիվը կազմել է 376՝ 2015թ. նույն ժամանակահատվածի 398 դեպքի համեմատությամբ:

Մշակվել և հաստատվել են ոլորտը կանոնակարգող մի շարք իրավական ակտեր՝ «Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագիրը», «Կրճքով կերակրման բժշկական հակացուցումների ցանկը», Առողջության առաջնային պահպանման հաստատություններում ծնողական կրթության կենտրոնների աշխատանքի կազմակերպման գործելակարգը, խորհրդատվական ստանդարտ ուղեցույցներ, «Առողջ նորածինների խնամք և հիվանդ նորածինների վարում» թեմայով 24 կլինիկական ուղեցույցները:

Շարունակվում է ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերմանն ու կանխարգելմանն ուղղված սկրինինգային ծրագիրը: Առողջության առաջնային պահպանման օղակում՝ պոլիկլինիկաներում և գյուղական ամբուլատորիաներում, 35-ից 68 տարեկան բոլոր քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար հետազոտվելու զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի, իսկ 30-ից 60 տարեկան բոլոր կանայք՝ ՊԱՊ թեստի հետազոտության միջոցով արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ ախտորոշման և կանխարգելման նպատակով:

**Առ 2016թ.** դեկտեմբերի 1-ն իրականացվել է շուրջ 860 հազար հետազոտություն, որից 430 հազարը՝ զարկերակային գերճնշման հայտնաբերման, 303 հազարը՝ արյան մեջ քաղցի գլյուկոզի, 101 հազարը՝ կանանց մոտ ՊԱՊ թեստի: Միաժամանակ, հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է 26. 000 մեզի և արյան երրորդ հետազոտություն:

ՀՀ Նախագահի՝ տարածքների համաչափ զարգացման քաղաքականությանը համահունչ մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացման ծրագրի շրջանակում տարեսկզբին շահագործման է հանձնվել Մեղրու տարածաշրջանային բազմապրոֆիլ բժշկական կենտրոնը: Ընթացիկ տարում իրենց դռներն են բացել նորակառույց 5 գյուղական բժշկական ամբուլատորիա:

Ներկայումս ընթանում են Արտաշատի բժշկական կենտրոնի արդիականացման և Սևանի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքները, որոնց ավարտը ակնկալվում է 2018 թվականին:

Արդիականացվել և ամենավերջին սերնդի բժշկական սարքավորումներով է հագեցվել ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնը», որտեղ տեղակայվել են ոսկրածուծի փոխպատվաստման ծառայություն և ցողունային բջիջների լաբորատորիա: Ստեղծված հնարավորությունները կնպաստեն արյան չարորակ հիվանդությունների բուժման արդյունավետության բարձրացմանը: Առաջին անգամ կիրականացվեն ոսկրածուծի փոխպատվաստումներ, բարձր դեղաչափային քիմիաթերապիա և միջազգային չափորոշիչներին համապատասխանող այլ միջամտություններ: